

Ա. Ա. Մատթևոսյան

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ-ՈՒՄ

Հացահատիկի համախառն բերքի ավելացման, ինչպես նաև կերի կայուն բաղադրի ստեղծման գործում եգիպտացորենի մշակութային կարևոր նշանակություն ունի:

Եգիպտացորենի հատիկը պարունակում է 60—70% օսլա, 11—14% սպիտակուց և 4—8% ճարպ: Այդքան շատ օսլա և սպիտակուց պարունակելու շնորհիվ հատիկից ստացվում է զանազան տեսակի ձավար, ալյուր, օսլա և այլ պարենային մթերքներ:

Եգիպտացորենը որպես կերային կուլտուրա բացառիկ նշանակություն ունի՝ օգտագործվում է ինչպես հատիկը, այնպես էլ վեգետատիվ մասսան: Եգիպտացորենի հատիկը աչքի է ընկնում իր կերային բարձր արժեքով, գյուղատնտեսական կենդանիների և թռչունների համար հանդիսանում է խտացրած լավագույն կերերից մեկը: Հայտնի է, որ շատ առաջավոր տնտեսություններում եգիպտացորենի հատիկը օգտագործում են խոզերին կերակրելու համար: Եգիպտացորենով կերակրված խոզերի ճարպի և մսի որակը լինում է բարձր:

Եգիպտացորենի ցողուններն ու տերևները նույնպես թանկարժեք կեր են հանդիսանում հատկապես խոշոր եղջերավոր անասունների համար: Նրան կարելի է օգտագործել կանաչ, չոր և սիլոսացած վիճակում: Եգիպտացորենից պատրաստած սիլոսը իր որակական ցուցանիշներով համարվում է չգերազանցվող:

Եգիպտացորենն իր հատիկի և կանաչ մասսայի բերքատվությամբ հացաբույսերի շարքում զբաղում է առաջին տեղը:

Մեծ է նաև եգիպտացորենի ագրոտեխնիկական նշանակությունը: Որպես շարահերկ կուլտուրա նա վճռական դեր է խաղում ինչպես դաշտային, այնպես էլ կերային ցանքաշրջանառություններում: Պայքարում է մոլախոտերի դեմ, որով և նպաստում է այլ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացմանը: Միաժամանակ շատ տեղերում եգիպտացորենն օգտագործում են որպես ձյուն կուտակելու միջոց:

Անասնաբուժական մթերքների արտադրությունն ավելացնելու մասին Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1955 թ. Հունվարյան պլենումի որոշման մեջ ասված է. «Եգիպտացորենի արժեքավորությունն այն է, որ միայն այդ կուլտուրան միաժամանակ լուծում է երկու խնդիր՝ հացահատիկի ռեսուրսների համալրումը և եգիպտացորենի ցողուններից լավ սիլոսի ստացումը», այնուհետև որոշման մեջ ասված է. «Մեծ նշանակություն տալով եգիպտացորենի՝ որպես հացահատիկի համախառն բերքի ավելացման կարևորագույն ռեզերվի, ցանքերի ընդարձակմանը, անհրաժեշտ դառնել մինչև 1960 թվականը եգիպտացորենի ցանքատարածությունները հասցնելու առնվազն 28 միլիոն հեկտարի:

եզիպտացորենը, որպես առավել բերքատու հացահատիկային կուլտուրա պետք է լայն տարածում ստանա երկրի բոլոր շրջաններում»:

Պլենումի այդ որոշումները հնարավոր է կիրառել Հայկական ՍՍՌ-ի մի շարք շրջաններում:

Վերջին տարիների ընթացքում ռեսպուբլիկայի մի շարք գիտնականներ պրոֆ. Մ. Գ. Թումանյան, պրոֆ. Գ. Խ. Աղաջանյան, Գ. Շ. Ասլանյան, Հ. Գ. Կուրդիյան, Ա. Ս. Սարխոշյան, Հ. Թ. Մեսրոպյան և ուրիշներ տարբեր հողակլիմայական պայմաններում ուսումնասիրել են եզիպտացորենի մշակութային հնարավորությունները ինչպես հատիկ, այնպես էլ կանաչ մասսա ստանալու համար. նրա մշակութայինը խոզանացանի պայմաններում, նրա ագրոտեխնիկական մի քանի միջոցառումները՝ պարարտացումը, ցանքի ժամկետներն ու խտությունը, ինչպես նաև նոր արժեքավոր սորտերի ստացումը և սերմանյութի լավացման հնարավորությունները:

Հայկական ՍՍՌ-ի տարբեր հողակլիմայական գոտիներում եզիպտացորենի մշակությունը տարբեր ուղղությամբ է տարվում:

Եզիպտացորենը համեմատաբար ջերմասեր բույս է, ունի բավական երկար վեգետացիայի տևողություն, որի պատճառով էլ Հայկական ՍՍՌ-ի ոչ բոլոր շրջանների հողակլիմայական պայմանները նպաստավոր են նրա նորմալ աճման ու վարգացման համար:

Նրկար տարիների դիտողությունները և սոցիալիստական գյուղատնտեսության արտադրական փորձը ապացուցում են, որ Հոկտեմբերյանի, Արտաշատի, Էջմիածնի, Վեդու, Իջևանի, Շամշադինի, Ալավերդու, Նոյեմբերյանի շրջաններում, ինչպես նաև Ագիզբեկովի, Մեղրու, Ղափանի, Աշաբակի, Կոտայքի ցածրագիր գյուղերի ջրովի հողերում եզիպտացորենը զարնանային ցանքի պայմաններում նորմալ կերպով աճում ու վարգանում է, տալով միանգամայն հասունացած հատիկներ:

Հ. Գ. Կուրդիյանը 1944—1948 թթ. ընթացքում Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի նախկին Երկրագործության ինստիտուտի՝ Կարմիր-Բլուրի փորձադաշտում և Արտաշատի շրջանի Մխչյանի կոլտնտեսությունում ուսումնասիրել է ատամնաձև եզիպտացորենի Միննեղոտա-13 սորտի բիոլոգիական առանձնահատկությունները: Հ. Գ. Կուրդիյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արտաշատի պայմաններում, եզիպտացորենի վերը նշված սորտը, բարձր ագրոտեխնիկայի կիրառման դեպքում (հողի հիմնական և նախացանքային մշակություն, պարարտացում, ցանքի ճիշտ ժամկետներ ու սնման մոկերեսի ընտրություն, կանոնավոր խնամք և այլն) տալիս է հատիկի-կողրերի 60—82,5 և կանաչ մասսայի՝ 423—550 ցենտներ բերք:

Մի շարք ուսումնասիրություններ (Մ. Գ. Թումանյան, Հ. Գ. Կուրդիյան, Ա. Ս. Սարխոշյան) ցույց են տալիս, որ Արարատյան հարթավայրի պայմաններում հնարավոր է ստանալ երկու բերք, առաջինը հավաքել հատիկի հասունացման և երկրորդը՝ կանաչ վիճակում՝ հատիկի կաթնային-մոմային հասունացման ժամանակ՝ անասուններին կերակրելու կամ սիլոս պատրաստելու համար:

Հայկական ՍՍՌ-ի նախալեռնային գոտում (Կոտայքի շրջան, Ելզովան գյուղ) պրոֆ. Գ. Խ. Աղաջանյանն անջրդի պայմաններում 1950 և 1951 թվականներին ուսումնասիրել է եգիպտացորենի մշակութային հնարավորությունը սիլոսի համար: Այդ փորձերում նպաստավոր պայմանների (խոնավության)

բացակայության պատճառով եզիպտացորենը շատ թույլ է աճում, նրա ցողունների բարձրությունը 35—40 սմ չի անցնում, որի հետևանքով էլ կանաչ մասսայի բերքը հազիվ հասնում է 101—162 ց/հ։ Նախալեռնային գոտու անջրդի պայմաններում եզիպտացորենի ներկա սորտերը նորմալ բերք տալ չեն կարող, ուստի անհրաժեշտ է շարունակել նրա վերաբերյալ ուսումնասիրությունները։

Այդ նույն նախալեռնային գոտու ջրովի պայմաններում եզիպտացորենը նորմալ կերպով աճում ու զարգանում է։ Աշտարակի շրջանի Ոսկեազ գյուղի «Դեպի կոմունիզմ» կոլտնտեսության կոլտուրայի տան փորձահողամասում 1953 թվականի դարձանը ցանված ատամնաձև եզիպտացորենի բարձրությունը 2,0—2,5 մետրից ավելի էր և օգոստոսի վերջին հատիկները հասունացել էին։ Այդ պայմաններում եզիպտացորենը տալիս է ինչպես հատիկի, այնպես էլ կանաչ մասսայի բարձր բերք։ Դեռ ավելին. Աշտարակի շրջանի Ոսկեազ գյուղի ջրովի պայմաններում Ա. Ս. Սարխոշյանն աշնանացան ցորենը հնձելուց հետո վարել և հուլիսի վերջին—օգոստոսի սկզբին ցանել է եզիպտացորենի մի քանի սորտեր՝ Միննեդոտա-13, Սաերլինգ, Կրասնոդարյան, Ատամնաձև, Լենինականի կարծր, Մ. Գ. Թումանյանի Շաքարային և այլն։ Ա. Ս. Սարխոշյանի այս փորձերը ցույց են տալիս, որ նախալեռնային գոտու ջրովի պայմաններում խողանացան եզիպտացորենը փարթամ աճում է, բույսերի բարձրությունը հասնում է 130—250 սմ, բայց հատիկները լրիվ չեն հասունանում և մնում են կաթնա-մոմային վիճակում։ Այս պայմաններում յուրաքանչյուր հեկտարից ստացված կանաչ մասսայի բերքը տատանվում է 380—584 ց/հ սահմաններում։

Այդ փորձերի տվյալները, ինչպես նաև մեր դիտողությունները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ նախալեռնային գոտու ջրովի հողերում 4—5 անգամ ջրելու դեպքում, ինչպես դարձանային ցանքի, այնպես էլ խողանացանի դեպքում միանգամայն հնարավոր է ստանալ եզիպտացորենի կանաչ մասսայի բավական բարձր բերք՝ սիլոսի համար։

Նման ուսումնասիրությունները հաստատում են, որ եզիպտացորենի մշակությունը միանգամայն հնարավոր է նաև Կիրովականի, Ստեփանավանի, Կրասնոսելսկու և Ապարանի շրջաններում։

Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի նախկին ներկագործության ինստիտուտի Լենինականի փորձագաշտում բնկ. Հ. Թ. Մեսրոպյանի կողմից 1946—1949 թթ. ջրովի պայմաններում զրված փորձերը ցույց են տալիս, որ եզիպտացորենի ատամնաձև ու կարծր ձևերը տալիս են ոչ միայն կանաչ մասսայի մեծ բերք, այլև միանգամայն հասունացած հատիկներ։ Այդ նույն փորձերում յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 38,0—56,0 ց. հատիկ։

Ախուրյանի շրջանի Հացիկ գյուղի Կուլբիշևի անվան կոլտնտեսությունում 1949 թ. մեկ հեկտար տարածության վրա ցանված կարծր ձևի եզիպտացորենից ստացվել է 52 ցենտներ հատիկի բերք։

Այդ փորձերում բույսերը նորմալ աճում և 133—155 սմ բարձրությամբ ցողուններ են տալիս։ Հատիկը հասունանում է մինչև սեպտեմբերի 11-ը։

Հ. Թ. Մեսրոպյանի վերը նշված փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Ախուրյանի շրջանի ջրովի պայմաններում նույնպես հնարավոր է եզիպտացորենի մշակությունը ինչպես հատիկ, այնպես էլ կանաչ մասսա ստանալու համար։

Ախտաչի, Սեանի, Նոր Բայազետի, Մարտունու, Բասարգեշարի, Սիսիանի, Գորիսի, Ազինի, Արթիկի և Ղուկասյանի շրջաններում եզիպտացորենի մշակու-

թյան հնարավորությունների մասին մեր ձեռքի տակ առայժմ չկան տվյալներ։
Հայկական ՍՍՌ-ի գիտա-հետազոտական հիմնարկներն առաջիկա տարիներում պետք է վերացնեն այդ բացը։

Ժամանակն է արդեն, որ ռեսպուբլիկայում գործող Պետական սորտ-տուգման տեսչությունն իր բոլոր տեսակափորձ հողամասերում փորձարկեղիպատացորենի սորտերը՝ ինչպես հատիկ, այնպես էլ կանաչ մասսա ստանալու համար։

Եղիպտացորենի ընդհանրապես բազմաթիվ ձևեր են տարածված։ Հայտնի են նրա կարծր, շաքարային, օսլայաշատ, ճաքվող, թեփուկավոր և այլ ձևերը։

Եղիպտացորենի այդ խմբերն իրարից տարբերվում են բույսերի բարձրությամբ, բերքատվությամբ, մեկ բույսի վրա գտնվող կողերերի թվով, տերևների թվով, վեգետացիայի տևողությամբ, կողերերի ձևով ու մեծությամբ։ Տարբեր պայմաններում մշակելիս նրանք խիստ փոփոխվում են։

Հայկական ՍՍՌ-ի հողակլիմայական պայմաններում եղիպտացորենի վերոհիշյալ խմբերից հատիկ ու կանաչ մասսա ստանալու նպատակով պետք է մշակել ատամնաձև ու կարծր խմբերին պատկանող սորտերը. սրանք տալիս են ավելի շատ հատիկ և հաստ ու հյութալի ցողուններ և խոշոր ու շատ տերևներ ունենալու շնորհիվ՝ հսկայական քանակությամբ կանաչ մասսա։

Եղիպտացորենի ատամնաձև խմբին են պատկանում բազմաթիվ բերքատու սորտեր, օրինակ, Ստերլինգը, Լիմենգ Կուբանսկայան, Ասետինսկայա սպիտակը, Միննեզոտան, Կրասնոդարսկայա-3, Համամիովենական բուսաբուծության ինստիտուտի բազմաթիվ սորտերը և այլն, որոնք աչքի են ընկնում իրենց բերքատվությամբ, վեգետացիայի տևողությամբ, ցողունի բարձրությամբ, խոնավասիրությամբ, երաշտադիմացկանությամբ և այլ հատկանիշներով։

Անհրաժեշտ է առաջիկա 3—4 տարիների ընթացքում փորձարկել մեր ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում վերոհիշյալ այլ սորտերը, որպեսզի հնարավոր լինի հայտնաբերել դրանցից հեռանկարայիններն ու բերքատուները։

Եղիպտացորենի բերքատվության բարձրացումը խիստ կերպով կախված է ագրոտեխնիկական միջոցառումները ճիշտ ժամկետին ու բարձր որակով կատարելուց։

Բարձր բերքի վարպետները հատուկ խնամքով ժամանակին կատարում են աշնան խոր վարը, որը նպաստում է խոնավության կուտակմանը, մոլախոտերի ոչնչացմանը և նպաստավոր պայմաններ է ստեղծում եղիպտացորենի սերմերի ծլման համար։

Առանձնահատուկ խնամքով պետք է նախապատրաստել սերմացուն։ Եղիպտացորենի բարձր բերքի վարպետ, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, Մոսկվայի մրցանակի լաուրեատ Մ. Ե. Օզյորնին սերմի նախապատրաստումն սկսում է դաշտից՝ առանձնացնելով այն բույսերը, որոնք աճել են փաթեթում, վաղահաս են, չեն վնասվել հիվանդություններից և ունեն շատ կողեր։ Այդ կողերից էլ նա ընտրում է ամենախոշորները։ Կողերը լավ չորացնելուց հետո ամրոգջ ձմեռը պահում է շոր ու օդաթափանց պահեստներում։ Հայտնի է, որ կողերի հիմքի և ծայրի հատիկները համեմատաբար թույլ են զարգացած և տալիս են թույլ ու վտիտ ծիլեր։ Այդ հատիկներից առաջացած բույսերը վատ են աճում և ցածր բերք են տալիս։ Սերմի համար պետք է վերցնել միայն կողերի միջին մասի հատիկները։ Ձմեռվա ընթացքում 3—4 անգամ որոշում են

սերմերի ծլունակությունը: Կողբերից հասիկը պետք է անջատել զարնանը, ցանքից անմիջապես առաջ: Ցանքից առաջ սերմացուն անհրաժեշտ է ախտահանել գրանոզոնով: Ըստ Ի. Վ. Յակուշկինի և Կ. Բ. Բելինսկու, ախտահանման համար պետք է վերցնել մեկ տոննա եզիպտացորենի սերմի համար մեկ կիլոգրամ գրանոզոն:

Եզիպտացորենը ջերմասեր բույս է, նրա սերմերը համերաշխ են ծլում, հրբ 10 սմ խորություն վրա հողի ջերմաստիճանը հավասար է 10—12-ի: Վաղ ցանքի դեպքում սերմերը չեն ծլում՝ նեխվում են: Սովորաբար պետք է եզիպտացորենի ցանքը կատարել դաշտային աշխատանքներն սկսելուց 25—30 օր հետո: Հ. Գ. Կուրդինյանի փորձերից երևում է, որ Արտաշատի պայմաններում հատիկի և կանաչ մասսայի ամենաբարձր բերք է ստացվել, երբ ցանքը կատարվել է ապրիլի 25-ին: Գ. Ն. Աղաջանյանի փորձերը ցույց են տալիս, որ Կոտայքի շրջանի Նլլովան գյուղի անջրդի պայմաններում եզիպտացորենի կանաչ մասսայի մաքսիմում բերք (162,5 ց/հ) է ստացվել, երբ ցանքը կատարվել է ապրիլի 23-ին:

Եզիպտացորենի բերքի բարձրացման գործում վճռական նշանակություն ունեն ցանքի ձևը և հեկտարի լիարժեքությունը:

Վերջին տարիներում առաջավորների փորձը լիովին ապացուցեց եզիպտացորենի քառակուսի-բնային ցանքի առավելությունները:

ՍՄԿՊ Կենտկոմի 1955 թ. Հունվարյան պլենումը որոշել է՝ «բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է եզիպտացորենի ցանքը կատարել քառակուսի-բնային եղանակով՝ բնում թողնելով, որպես կանոն, երկուական բույս»: Եզիպտացորենի քառակուսի-բնային ցանքի պայմաններում միջշարքային տարածությունը սահմանելով 70 սմ, թողնելով յուրաքանչյուր բնում երկուական բույս, հեկտարի վրա ստացվում է 40—41 հազար բույս: Բարձր ապրոտեխնիկայի կիրառման դեպքում (հողի հիմնական ու նախացանքային մշակում, սերմը ձիշտ ձևով նախապատրաստելը, ցանքը ձիշտ ժամանակին կատարելը, ցանքերի լավորակ խնամքը և այլն) եզիպտացորենի սերմը, նպաստավոր պայմանների մեջ ընկնելով, տալիս է մեծ աճ: Այս դեպքում յուրաքանչյուր բույսի վերերկրյա մասսան կանաչ վիճակում երկու կիլոգրամից ավելի քաշ է ունենում: Եզիպտացորենի յուրաքանչյուր հեկտարի վրա 40—41 հազար բույս աճեցնելու պայմաններում, եթե յուրաքանչյուր բույսի կանաչ մասսան ունենա անգամ մեկ կիլոգրամ քաշ, ապա հեկտարից կստացվի 400 ցենտներ կանաչ մասսա, իսկ երբ յուրաքանչյուր բույսի կանաչ մասսայի միջին քաշը լինի մեկ ու կես կիլոգրամ, ապա կստացվի մոտ 600 ցենտներ բերք:

Եզիպտացորենի քառակուսի-բնային ցանքի դեպքում ոչ միայն բարձր բերք է ստացվում, այլև հնարավոր է լինում ցանքերի խնամքի աշխատանքները ամբողջությամբ մեքենայացնել:

Հայկական ՍՍՌ-ի ոչ բոլոր պայմաններում է հնարավոր եզիպտացորենը ցանել քառակուսի-բնային եղանակով: Այն բոլոր վայրերում, ուր եզիպտացորենը ցանվում է թեթուլությունների վրա, անհրաժեշտ է ցանքը կատարել շարքերով: Այդ պայմաններում միջշարքային տարածությունը հավասար պետք է լինի 70 սմ-ի, իսկ միջբնային տարածությունը՝ 50 սմ-ի, յուրաքանչյուր բնում թողնելով երկուական բույս: Ցանքի այսպիսի ձևի դեպքում յուրաքանչյուր հեկտարի վրա հնարավոր է աճեցնել 56—57 հազար բույս: Շամշադինի շրջանի մի շարք գյուղերում՝ Նորաշեն, Վերին Կարմիր Աղբյուր, ցանքի այս

ձևի պայմաններում յուրաքանչյուր հեկտարից ստանում են 60—70 ցենտներ հատիկի բերք:

Եգիպտացորենի ցանքի ձևի, սնման մակերեսի, ցանքի ժամկետների խնդիրը, ինչպես հատիկ, այնպես էլ կանաչ մասսա ստանալու նպատակով, մեր ուսպուրչիկայում քիչ է ուսումնասիրված: Անհրաժեշտ է առաջիկա 2—3 տարվա ընթացքում այն ուսումնասիրել եգիպտացորեն մշակող բոլոր հողա-կիրմայական գոտիների համար:

Հայտնի է, որ եգիպտացորենը խաչաձև փոշոտվող բույս է: Հայտնի է նաև այն, որ շատ հաճախ արական օրգանները 10—20 օրով շուտ են հասունանում, քան իգական օրգանները: Այդ նկատի ունենալով, անհրաժեշտ է հիմնական մասիվում եգիպտացորենի ցանքը կատարելուց 10—15 օր հետո կատարել եգիպտացորենի մի քանի շարք լրացուցիչ ցանք: Այդ միջոցառումն ապահովում է բույսերի խաչաձև փոշոտումը և բարձրացնում է հատիկի բերքատվությունը: Եգիպտացորենի խնամքին վերաբերող աշխատանքները (նոսրացումը, սնուցումը, բջատումը, միջշարքային տարածությունների մշակումը, ջրումը, արհեստական-լրացուցիչ փոշոտումը և այլն) ժամանակին կատարելը մեծ չափով նպաստում է ինչպես հատիկի, այնպես էլ կանաչ մասսայի բերքատվության բարձրացմանը:

Հայկական ՍՍՌ-ի եգիպտացորեն մշակող կոլտնտեսությունները 1955 թվականի ընթացքում ժամանակին ու բարձր որակով կատարելով նրա մշակության հետ կապված բոլոր աշխատանքները, կստանան ինչպես հատիկի, այնպես էլ կանաչ մասսայի բարձր բերք:

Ստացվել է 9 փետրվարի 1955 թ.:

А. А. Матевосян

Кукуруза в Армянской ССР

Р е з ю м е

Во многих районах Армянской ССР кукуруза возделывается как на зерно, так и на зеленую массу. К таким районам относятся районы Араратской равнины, лесостепные районы, а также поливные массивы предгорной зоны. На малых площадях кукуруза возделывается в Кироваканском, Степанаванском и Красносельском районах. Имеются возможности возделывания кукурузы также в поливных условиях Ахурянского района.

В хлопковых районах и в поливных условиях предгорной зоны кукурузу возможно возделывать также и после уборки зерновых культур.

При пожнивном возделывании зубовидная и кремнистая кукуруза дает большой урожай зеленой массы.